

**ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ
ԱՐՄԻՆ ՎԵՐԵՆԵՐԻ ԱՐՁԱԿ ԵՐԿԵՐՈՒՄ**

Մ. Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

1915—1916 թթ. Թուրքիայում գերմանական ռազմական ներկայացուցչության սանիտարական զինվոր Արմին Վեգները ականատես եղավ հայ ժողովրդի արևմտյան հատվածի զանգվածային ոչնչացմանը, նա իր մարդկային պարտքը համարեց գործով ու գրչով պաշտպան կանգնել տեղահանված և բնաջնջման եզրին կանգնած օտար մի ժողովրդի: «Մարդկության բռնագաղթը» բանաստեղծությունը (1916 թ.), «Բանապարհ առանց տուն-դարձի» նամակների և օրագրային նյութերի ժողովածուն (1919 թ.), «Երանության տանը» էսքիզների զիրքը (1920 թ.), «Մատանի Հոսանքներ» խորագրով նովելների ժողովածուն (1921 թ.), ինչպես նաև գրողի հետպատերազմյան հրապարակախոսությունը՝ բաց նամակը Միացյալ Նահանգների նախագահ Վ. Վիլսոնին (1919 թ.), «Ժիշ Արարատից» ուղերձը Անտանտի երկրների կառավարություններին (1922 թ.) և, վերջապես, «Տեղահանություն» անավարտ վեպը ցասման խոսքեր են ընդդեմ անարդարության և միշտ կմրնան հայ ժողովրդի պատմական իրավունքների պաշտպանության անգնահատելի վավերագրեր:

Արդարացի է հրեա էմանուել բին Գորիոնը, որ խոսելով հայերի ցեղասպանությունը հրապարակավ դատապարտած առաջին գերմանացի գրողի մասին, գրում է. «...Դրանով նա ջնջեց խայտառակությունն իր սեփական ժողովրդի, որպես հայերին ոչնչացրած երկրի դաշնակցի: Միաժամանակ նա փրկեց պատիվը գրականության, խղճի ձևոված ձայնի, որ սպառնում էր խեղդվել պետությունների և նրանց զորապետների կողմից. այո՛, նա փրկեց նաև մարմնային կյանքը: Առնվազն նա ապացուցեց իբրև զոհ որոշված մի ժողովրդի հետնորդներին, որ Աստված դեռ կա աշխարհում, Աստված, որ համբերել է տալիս ու մխիթարում է»¹:

Վեգների մարդասիրական ու ինքնատիպ ստեղծագործությունը գրավեց գերմանական հայտնի գրողների ու քննադատների ուշադրությունը: Նրանք չհապաղեցին իրենց սրտի խոսքն ասել երիտասարդ գրողի առնական նկարագրի մասին ու առանձնապես հիացած էին Արևելքի ու արևելյան հոգեբանության ոչ արևմտական պատկերման նրա ակնածանք ազդող արվեստի փայլով: Վեգների տաղանդի ամենաբնորոշ գծերից է այն, որ նրա անձի մեջ միավորված են զտարյուն գրողն ու հեռատես քաղաքական գործիչը, ինչը և բացառիկ հետաքրքրականություն է տալիս նրա պատումին: Մի առանձնահատկություն, որ հատկապես նշանակալի է հայ եղեռնի թեման արծարծող նրա արձակ երկերում:

1917 թ. Արմին Վեգները իր անհատական ապրումների գեղարվեստական սեղմ, միագծություն բացառող ծրագրային փաստաթուղթն է կազմում՝ գրելով շորս նովել ընդգրկող «Պատանի Հոսանքներ» զիրքը:

«Հարձակում կանանց բաղնիքի վրա» նովելը ստեղծելուց առաջ Վեգները Թուրքիայի գերմանական դեսպանատանը հետազոտում է 1895—1896 թթ. էրզրումի հայ բնակչության ջարդերի մասին փաստաթղթերը: Ըստ

¹ A. Wegner, Fällst du, umarme auch die Erde oder Der Mann, der an das Wort glaubt, Wuppertal, 1974, S. 156.

Յո. Վերնիկե-Ուոթմայերի (1963—1965 թթ. Վեգների քարտուղարուն հին էր) այս նովելը նախապատրաստական աշխատանք է եղել «Տեղահանություն» վեպի համար:

Հիշյալ նովելի կենտրոնական կերպարներից թուրք սպա Վուլֆին «Տեղահանություն» վեպում սուլթանի դեմ եռանդուն գործողություններ սկսած երիտթուրք դավադիրների շարքերում է²:

Անշուշտ, նովելում արտացոլված է նաև Հայաստանի հետ Վեգների առաջին ծանոթության մղձավանջային տպավորությունը: Իննամյա Արմինը պատահամբ թերթից տեղեկանում է Փոքր Ասիայում արյունոտ սուլթան Աբդուլ Համիդի կաղմակերպած զարհուրելի կոստորածի մասին: Մինչ այդ նա չէր լսել այն ժողովրդի մասին, որի անունն այնքան համահունչ էր իր անվանը: Այդ տառապած ժողովրդի դաժան ճակատագիրը անջնջելի կնիք է դնում պոուսական դպրոցականի հոգում: «Տասնյակ հազարավոր մարդկանց քշել էին իրենց գլուղներից ու քաղաքներից, կողոպտել, սպանել: Ես կարգացի, որ մի բաղնիքում հարձակվել էին կանանց վրա, մի համայնք հրդեհվել էր իր եկեղեցում: Մի քուրդ մսագործ կտրատել էր հայերի դիակները, որ ծաղրաշփոթ անցորդներին առաջարկեք գնել»³:

Պատկերելով թուրք բարբարոսների սարքած նախճիրը, հեղինակը, թվում է, անասելին է պատմում բառերով: Նովելում դեպքերն ու իրադարձությունների տարերային ծավալումը հասցված է ծայր ահավորության, կատարվածը պատկերվում է մերկ ու անխնա:

Հայ բնակչության ճակատագրի հետնախորքում առանձնանում է երկու անհատների կյանքի պատմությունը: Հայ մարդիկ ներկայացված են ցավի ու վշտի ամենի ծովում: Մայրահեղորեն սրված կենաց ու մահու պայքարի մեջ էլ ծավալվում է ողջ պատմությունը:

Մահմեդականների ռեքրեթ օրվա մեծ աղոթքից հետո, քաղաքում տիրող սովից զրգոված խուժանը համիդի գնդերի հետ հարձակվում է հայ ազգաբնակչության վրա՝ թալանելու և սպանելու նպատակով: Էրզրումի վալիի որդին մահից փրկում է մի հայ կնոջ: Վուլֆին ամենևին նման չէ մյուս թուրքերին: Նա սովորել է ֆրանսիացի վանականների մոտ և հաճախել Ստամբուլի ռազմական դպրոց: Սրբուհուն՝ մի ալիի հայուհու, նա վաղուց էր սիրում, բայց կինը նրա սերը մեղծում էր: Ոչինչ չէր կարող օգնել նրան՝ գրավելու թուրքական կոստորածների ժամանակ ամուսնուն կոտորած կնոջ ուղադրությունը և նվաճելու նրա սերը: Միակ միջոցը բռնությունն էր, սակայն Վուլֆին դրան չի դիմում: Փոխարենն այժմ նա ունեւ կնոջն իր զգացմունքներն առատհայտելու հնարավորությունը: Տեղեկալուով քաղաքում տիրող իրադարձությունների մասին, նա Սրբուհուն փրկելու նպատակով ամբոխի մեջ է հայտնվում: «Իսկ կի՞րքն էր, որ մղում էր նրան: Ամոթից տանջված՝ նա ետ նայեց և շրջեց գլուխը՝ պատրաստ փախչելու սեփական պահանջումներից»⁴:

Մինչ նա կհասնեւ բաղնիքները, ուր Սրբուհին ուրիշ կանանց հետ տնային հոգնեցուցիչ աշխատանքից հետո հանգստանում էր, ականատես է լինում սարսափի բազում տեսարանների, որոնց կողքով առանց զարշանքի չէր կարող անցնել: Բայց նա միակնակ ի վիճակի չէ գործելու սուլթանի հրամանի դեմ: Հենց կոստորածների սեզոնում Վուլֆին զուսպ բողոք է ուղղում սուլթանի արյունոտ ծրագրերն իրագործող հոռու Իսկ Սրբուհու համար նա «սովորական» թուրք է, դաժան, խնայեւ համիդյան կամակատարները: Միայն այն ժամանակ, երբ իրեն վտանգելով՝ Վուլֆին Սրբուհուն օգնում է փախչել բաղնիքում ծայր առած սպանդից, վերջինս արժանիքներ է

² J. Wernicke—Rothmayer. Armin T. Wegner, Gesellschafts-erfahrung und literarisches Werk, Frankfurt am Main, 1982, S. 51.

³ A. Wegner, Am Kreuzweg der Welten, Berlin, 1982, S. 11.

⁴ Նույն տեղում, էջ 215:

տեսանում նրա մեջ, թեպետ երեսայի և ամուսնու սպանվելուց հետո կյանքն արդեն նրան չի հրապուրում: Երիտասարդ թուրքը Սրբուհու հետ կրում է բոլոր դժվարությունները: Նա կնոջը բերում է սննդամթերք, փրկվելու համար հայրենակիցների հետ թաքնվում է քաղաքի ստորգետնյա ապաստաններում: Լուսթֆին գիտի, որ իր գործողությամբ դարձել է հոր թշնամին: Այդ պատճառով էլ նա թողնում է հայրական տունը, որը նրան այլևս դժոխք էր թվում: Քառասուն օր անց երկու փախստականները հասնում են Մոսկու: Այնտեղ Լուսթֆին ուզում է խառնությունի մոտ սոցիալական անցնել և սիրած կնոջ հետ համեատ կյանք վարել, ինչը վաղուց երազում էր: Հարստություն ու զինվորական աստիճանը նրան չէր հրապուրում: Նա գիտե՞ գնահատել իսկական երջանկությունը, որ տրվում է միայն արդար ճանապարհով:

Այսպես երկու մարդ հաղթահարում են այն սահմանները, որ երկու ժողովուրդների միջև արհեստականորեն դրել են պետական ու կրոնական խավարամիտ գործիչները: Այս տեսանկյունից էլ Վեգները բնութագրում է թուրք հասարակ ժողովրդին. «...այն բազում հարուր հազարավոր խեղճերը, որոնք կույր աչքերով, հայրերի սնահավատությամբ մթափնված, շղթայակալ ընկած են այս լաբիրինթոսի խավարում, ուր քշել է նրանց Ղուրանը...»⁵: Եվ խավարամած հոգով հազարավոր մոլեռանդ թուրքեր, հասարակ մարդիկ, այդ թվում կանայք և փոքրիկներ, մասնակցում են հայերի դեմ կատարվող արյունալի գործողություններին:

Անսահման դաժանությունն է հատկանշական Վալիին, որը որդուց պահանջում է դառնալ իր ոճրագործությունների աշակիցը: «Դու մուսուլման ես: Մուհամմեդի զավակները պետք է կատարեն իրենց պարտքը: Ոչ մի հայ չպիտի խնայվի: Դա պարտի հրամանն է»⁶: Մարդկային կյանքը նրա համար ոչինչ է: Նրա նպատակն է սպանել հնարավորին չափ շատ «անհավատներին», որպեսզի այդպիսով ջահի սուրթանի համակրանքը: Վալին ուզում է որդուն այնպես դաստիարակել, որ իրեն նմանվի: Նա բաղնիքում Սրբուհու մոտ կանգնած Լուսթֆին ասում է. «Ես նրան քո ձեռքն եմ տալիս: Սովորիր, որդիս, ինչպես են սպանում անհավատներին»⁷: Հատկապես այլանդակ ու վարդապետ նա այն տեսարանում, որ նկարագրվում է միջնաբերդի նրա տունը: Վալին անարգում է հայ աղջիկներին, որոնք այնուհետև մերկ կանգնեցվում են իրենց հայրերի առաջ: Խեղճ ժերոնիմները քսան ժամ ձեռք բանգում են առանց ուտեստի և ըմպելիքի: Ու երբ առաջապառ ընկնում է, իրանց կողմ են նետվում պահակները և հրաշեկ երկաթներով այրում մեջքերը:

Նովելում առկա են այդ ժամանակ ժողովում ապրող էքսպրեսիոնիստական գրականությանը բնորոշ աղետի և կործանման մոտիվները, ինչպես նաև էքսպրեսիոնիզմի կարգախոսները՝ սիրո և բարեկամության մասին: Վեգները ցույց է տալիս, որ շնայած համընդհանուր շարիքին՝ մարդկային բնույթի ոչ մի ոչնչացել. միայն սերն է ունակ փրկելու աշխարհը: Այս նովելով հեղինակը մեղադրական խոսք է ասում հայկական ջարդերի կազմակերպիչներին, առն զոգորդելով թուրքիայում տիրող հասարակական, հարաբերությունների մեղացուցիչ քննությունը:

Ոչ միայն «Պատանի Հուսեյնը» ժողովածուի, այլև հայ ժողովրդի պատմության ամենաարդիւնատ էջերն առաջադրող վեգներյան ողջ ստեղծագործության մեջ առանձնանում է «Բանկիրը» նովելը, որի գաղափարական կիզակնում ոչ թե նահատակվող հայ ժողովուրդն է, այլ հայրենիքի աղատարություն համար պայքարող (ավելի ճիշտ՝ պայքարի հնար գտնող) կամային մարդը: Սա ամենևին չի նշանակում, թե օսմանյան բռնությունները

⁵ A. Wegner, Im Hause der Glückseligkeit, Dresden, 1920, S. 166.

⁶ A. Wegner, Der Knabe Hussein, Dresden, 1921, S. 211.

⁷ Նույն տեղում, էջ 222:

են պակաս (կամ թերթմբունված) այս երկում, և հալածական ժողովրդի զավակին իբր «միջոց է տրվում» իր աղատություն մասին խորհելու: Ո՛չ, անմարդկային զարհուրանքներից ու տառապանքներից անպայմանորեն ծնվելիք ցասման ու ըմբոստություն ճիշտ է դա, երկնքի պես անհուն մի տենչ՝ որչափ ծածուկ-անըջային, նույնչափ իրական, համառ, աննահանջ:

Բանկիր Օննիկ Կարիբյանը արհեստավոր հայ մարդու զավակ է: Թուրքերը սպանել էին նրա պապին, հորը և հորեղբայրներին:

Հարազատ ժողովրդի աղատագրության գործին նվիրվելը ոչ թե զոհողություն է նրա կողմից, այլ զոյատեկելու հրամայական և մարդ մնալու միակ երաշխիք: Որպեսզի համնի ղեկավար դիրքի և, ազդելով քաղաքականության վրա, պատմության անիվը շրջի հայ ժողովրդի շահերի կողմը, նա չի երկընչում ոչ մի միջոցից: Խելքով, խորամանկությամբ և իրեն հատուկ գործարարությամբ նա դառնում է Բաղդադի ամենահարուստ մարդկանցից մեկը: Առանց վարանելու նա դառնում է մի հեղափոխական միություն անդամ և հույս կապում Ռուսաստանի հետ, որ կազակական ջոկատներ ունեւր Թեհրանում: Նա նաև սերտ բարեկամություն է հաստատում պարսկահայ երիտասարդ վաճառական Սփրայիմ Բադյանի հետ, որը գրագրի ծառայություններ է կատարում Թեհրանի ռուսական դեսպանատանը և կարող էր նպաստել հայրենիքի ազատագրման գործին:

Կարիբյանը զիտակցում է, որ ժողովրդի ուժը նրա միամտության մեջ է: «Օննիկը,— գրում է Վեզները,— սկսեց հասկանալ մեկուսացվածության վտանգը, որին մատնված էին ինքը և իր եղբայրները, որոնք, ունենալով միայն տնտեսական հաջողության ակնկալիքներ, ցրված էին կայսրության քաղաքներում՝ միշտ ենթակա բանտարկության ու սպանդի»⁸: Կարիբյանի կանոնավոր գործարքները հաջողությամբ են անցնում, և լավ հղացված ու հետամտված ծրագրի իրականացումը թվում է ոչ անհնարին: Բայց պատահում է անսպասելին: Ոստիկանությունը հայտնաբերում է իծծանը, որով նա շտապեցել էր Պարսկաստան ուղարկվող զաղտնի մի նամակ: Այսպես բանկիրի ձեռքակալումը դառնում է ելակետ (դրանով է սկսվում նովելը), որի շուրջ ծավալվում են անցյալի և ապագայի իրադարձությունները:

Կարիբյանն անշուշտ ո՛չ իդեալական կերպար է, ո՛չ էլ «հերոս»: Արդար նպատակի՝ հայրենիքի ազատագրման ճանապարհին նրան փառք ու հարստություն բերող գործարքները նրա դեմ սոցիալական դժգոհություն են առաջացնում: Այդպիսի վերաբերմունքն իր արտահայտությունն է գտնում վլադի, արհամարհական քրքիջում, որ պայթում է Օննիկին ձերբակալելիս և մշտապես հետապնդում նրան. «Դու մի ժամանակ բանկիր Կարիբյանն էիր: Դու ունեիր մեծ տուն, հարստություն, կին, երեխաներ, ուղտեր, լծկան եզներ և ծառաներ: Քո վերարկուն քիտմանի էր, և կրում էիր եվրոպական ձևվածքով հագուստներ: Բայց ի՞նչ ես հիմա: Նրանք քեզ շան պես կհետապնդեն իրենց ծաղրանքով և մարդկանց աչքերի առաջ կկախեն թոկից, ինչպես ճրագուի մոմը՝ պատրույգից»⁹:

Կարիբյանին նշավակում էին խաբեբա, գող, ոճրագործ և այլ բառերով, երբ նրան կալանած տանում էին շուկայով: Քաղաքում տիրող սովի պատճառը մարդիկ նրա մեջ էին տեսնում: «Նրանք (ամբոխը—Մ. Ս.) ոտքով խփում էին նրան, քաշում մորուքից և բռնունքով հարվածում մեջքին...»¹⁰: Սակայն Կարիբյանի մեջ գերիշխողը օրինավոր ու սուրբ հակումներն են: Մարդ, որ ապրում է ոչ միայն սեփական բարեկեցության համար: Նովելի մի քանի տողից տեղեկանում ենք, որ Օննիկի ընտանիքը իր տանը բնակեցնում է որբ երեխաների: Օննիկը նրանց ապահով օթեան տվող երկրորդ հայր է:

⁸ Նույն տեղում, էջ 67—68:

⁹ Նույն տեղում, էջ 61:

¹⁰ Նույն տեղում, էջ 104:

Հակասական է այս կերպարը «ժամանակային» առումով: Կարիքյանը սեփական մաշկի վրա զգացել է աղքատության բոլոր դառնությունները: Տառնվեց տարեկան հասակում նա Թեհրանի բանկերից մեկում թղթատար էր և հետագա կյանքում անդադրում ձգտում էր բարձր հասարակական դիրքի: Արդյո՞ք ճիշտ էր վարվում նա, հարստահարելով հասարակ մարդկանց: Արդարացի՞ են նրա արարքները, երբ խոսքն իր ժողովրդի ազատության մասին է: Վնա երբեք չէր մոռանում անարդարությունը, որ իր ընտանիքն էր կրել: Նրա սրտի խորքում ապրում էր ատելությունը, ինչպես մեկուսացված պառլամենտը մի շտեմարանի, որի դռները թեև կողպած են, սակայն բանալիները չեն կորսված¹¹: Հարկավ, այս դեպքում նվազագույն վերապահություն կարող ենք ասել, որ նպատակն արդարացնում է միջոցները: Բնավորությունների ու երևույթների պատկերման օբյեկտիվությամբ հանգերձ՝ նույնի տողերում զգացվում է հեղինակի համակրանքը Կարիքյանի նկատմամբ: Դա կոնկրետանում է նաև թանտի տեսարանում, ուր Կարիքյանն իրեն համեմատում է մյուս բանտարկյալների հետ: Վնա զննիք նրանց, — խորհում էր Օննիկը, — դա ի՞նչ կյանք էր, որ վարում էին նրանք բոլորը... գողանում էին, թուղթ խաղում, խաբում, աշխատում միշտ միայն մի պատճառով՝ փողի և լիզվի հաճույքի համար: Դու դիտելիք նրանց թուլությունները, այդ պատճառով դու հարստացար, դու նրանց բոլորին տիրում էիր քո փողով: Դրա համար էր, որ բեռնակիրները շուկայում կողոպտում էին առևտրականներին, գողերը թալանում էին խանութները, սպաները շահագործում էին իրենց խեղճ, իրավազուրկ զինվորներին, որ սրճարաններում վատեն նրանց աշխատավարձը: Մեկ-երկու ամսից կամ տարուց նրանց ազատ կարձակեն, և նրանք կրկին կախեն թուղթ խաղալ, գողանալ, խաբել, շահագործել միայն ու միայն մի նպատակով, որ զվարճանան: Բայց դու, դու, որ միշտ ապրել ես միայն քո ընտանիքի համար, ոչ մի վայրկյան չէիր դադարում ասել քեզ ճշդողներին, միշտ մտածելով միայն քո ժողովրդի երջանկության մասին, դու, ում հորը նրա՞ք օրը, ցերեկով սպանեցին փողոցում, դու քո կյանքը տանուլ տվիր, քանզի անխոհեմ մի ակնթարթի մի քանի տող շորագրեցիր ծծանով, որ ընկավ թշնամիներիդ ձեռքը... Կա՞ արդարություն¹²: Այս տողերը մեկնաբանման կարիք չունեն: Կարիքյանը ամբողջ հոգով ձգտում է ու հավատում իր ժողովրդի ազատությանը: Կտակում, որ նա թողնում է հարազատներին, ասված է, որ ինքը ամենուր է՝ ազատության գործի համար: Կեցցե՛ Հայաստանը: Կեցցե՛ ազատությունը: Վավատացե՛ք մեր ժողովրդի վերջնական հաղթանակին և դուք երբեք դժբախտ չեք լինի¹³:

Չափազանց փորձողանշական իմաստ ունի բանտում Կարիքյանի տեսած «արսափազդու» երազը: Այն ներկայանում է որպես Հայաստանի անցյալ-ներկայի մի ուրվագծային տեսարան, ու ապագա նահատակությունների և վերածննդի մարգարեություն: Նույնի վերջում կրկին հույս է տրվում տարօրինակ հոգեբանությունը թուրք մոլոխալ ամբոխի, որի ամեն մի նախճիրը հրահրում է նրա բիրտ ու անասնական ինքնահիարումը: Սահմանակցությունից սողնալով դա պատկերվում է դժբախտ բանկիրի մարմինն անարդելու տեսարանում¹⁴:

Կարիքյանը բարձրախոհ, իր ազգի անկախությանը ձգտող հայ բուրժուա է: Այսպիսիների աջակցության ու առաջնորդության կարիքն է զգում ժողովուրդը, որ բարձրանա օտարի յծի դեմ: Հայկական քարգերի ականատես վեդները նման մարդկանց հետ էր կապում հայ ժողովրդի ազատագրման ու ապագայի հույսերը:

11 Նույն տեղում, էջ 79—80:

12 Նույն տեղում, էջ 86—87:

13 Նույն տեղում, էջ 94—95:

14 Նույն տեղում, էջ 109—110:

Նույնիշխում դործում են նաև այլ կերպարներ: Նշենք բանկիրի մորը: Բանկիրի մայրը տեսել ու տարել է շատ դարձուրանքներ: Կարիքյանի ընտանիքի սիրելին է նա: Թեպետ արդեն որդու մոտ չի բնակվում, բայց նրանից բաժան էլ չէ, հաճախ են խորհուրդ հարցնում նրանից: Ըստ Բայկական անվտանգության, հոր մահից հետո ավագ որդի Օննիկը մոր հետ ստանձնել էր ընտանիքի ղեկավար դերը: Տպավորիչ պատկերներով ցույց է տրվում, թե ինչպիսի քաղաք է արժանանում այս կինը, ինչ ակնածանքով և ուշադրությամբ են ընտանիքի անդամները փերաբերվում նրան. «Երբ նա (Կարիքյանը—Մ. Ս.) մոր հետ սեղան էր նստում, նրան. սպասարկում էին կինն ու կրտսեր եղբայրները...»¹⁵: Այս կնոջ ուժի և խիզախության մասին ավելի որոշ տեղեկանում ենք նովելի ավարտին, ուր նա, շնայած ծայրահեղ վրդապանի, իր մեջ ուժ է գտնում իբրև մեծ պարտք ու մեծագույն պատիվ՝ իրականացնելու որդու թաղման: Ուժեղ, կամային կինը գիտե որոշել մի ողջ ընտանիքի հետագա բախտը: Կերպար, որ անհամատեղելի է Վեգների այնքան հաճախ պատկերած մահամեղական կանանց կերպարներին, որոնց հասարակության մեջ և ընտանիքում վերապահված է լավագույն դեպքում անմոռելի կամակատարի, վատագույն դեպքում՝ բոկոտն բարձրադաս դեր:

Բանկիրի մոր Կերպարը հայ կնոջը գեղարվեստորեն ներկայացնելու Վեգների անդրանիկ փորձը չէ: Նրա «Հայ մորը» ձևը, որ տեղ է գտել «Երանոթյան տանը» ժողովածուում, ինքնին մի արձակ բանաստեղծություն է, որ աչքի է ընկնում նկարագրման անկաշկանդ ու մտերմիկ գեղեցկությամբ: Մայրը ամենաքնքուշ, հոգատար, սիրալիր ու զգայուն կինն է, մեկը հաղարներից, որ թուրքական ոճագործություններից ամուսին ու օթևան կորցրած, երեսանների հետ բռնել է աքսորի ճամփան՝ սրտում անթեղած հայրենի եզերք դառնալու հույսը¹⁶:

«Տեղահանություն, կամ սերունդներն անցնում են ինչպես տավրեներն արևի տակ» վեպի զարգացող Վեգները հրապարակել էր դեռևս Թուրքիայում ծառայելու տարիներին: 1916 թ. հոկտեմբերի 28-ին Գերմանիա վերադառնալիս, Կոնիայում Վեգները իր օրագրում նշում է. «Երբեմն, առկային, խորատուզվում եմ՝ երանքների մեջ, և այնժամ կուպիտ ու զարհուրելի մի երկ է հառնում իմ առջև. կարծում եմ, այն վերաբերելու է ամենադաժան բանին, որ երբեք գրվել է մարդկային թշվառության մասին»¹⁷:

Արդեն 1920-ական թվականների սկզբին, կանխազգալով, որ այն, ինչ պատահեց Թուրքիայում, կարող էր կրկնվել և Արևմուտքում, Վեգները շարունակ Գերմանիայում և նրա հարևան երկրներում նկարագրում էր Միջագետքի անապատում ի տեսածը և դառնություններ նկատում. որ մարդիկ իրենց առօրեական անհոգությունից չեն ուզում դուրս գալ: «Անապատը հեռու է մեզից», ահա այն ամենը, ինչ նրանք կարողացան ասել նրան¹⁸: Այդ ժամանակ էլ Վեգները ձեռնամուխ եղավ «Տեղահանություն» վեպի ստեղծմանը, որը Յ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի նման պետք է կրկնվող շարքի մասին նախադրույթում լինեք աշխարհին¹⁹:

Վեպի առաջին մասն ավարտված էր, երբ Գերմանիայում իշխանության գլուխ անցավ ֆաշիզմը: Ցավոք, զանազան պատճառներով Վեգներին այդպես էլ չհասողիկեց ավարտել վեպը: Գրողի (աչդին՝ Իրենե Կովալսկան, գրականադետ Արեբրտ Մուշեղյանին գրել է (1988 թ. մարտի 12), որ «Տեղահանություն» վեպի ձեռագիրը պահվում է Մարթախի Շիլլերի անվան Ազգային թանգարանում: Ժամանակն է, որ Հասարակական հետաքրքրվեն նաև այդ վեպով: Ընթերցողին հայտնի է վեպի առաջին գլուխներից միայն մեկը՝

¹⁵ A. Wegner, Der Knabe Hussein, Dresden, 1921, S. 75—76.

¹⁶ A. Wegner, Fällst du, umarme auch die Erde, Wuppertal, 1974, S. 48—49.

¹⁷ A. Wegner, Der Weg ohne Heimkehr, Berlin, 1919, S. 171.

¹⁸ A. Wegner, Fällst du, umarme auch die Erde, Wuppertal, 1974, S. 111.

¹⁹ Նույն տեղում, էջ 116:

«Փոքրիկ Ադամը», որի ապշեցուցիչ գեղարվեստականությունը վկայում է, որ ամբողջական վեպը պետք է լիներ հայերի ցեղասպանության մի չափազանց ինքնատիպ ու կոթողային հուշարձան: 'Ավելացնենք, որ հիշյալ հատվածը լույս է տեսել 1932-ին, այսինքն՝ ավելի վաղ, քան Վերֆինը կներկայացնեի իր հանրահայտ վեպը:

«Տեղահանություն» վեպի այս հատվածը պատմում է մի հայ ընտանիքի մասին, որ թուրք մարդասպանների լծոքը շրջանակում համար ժառանգանդուն է նետվում: Ժայռի կատարին մնում է միայն ընտանիքի ամենափոքրը՝ հնգամյա Ադամը: Այս հոգեցունց պատմությունը հուժկու բողոք է ընդդեմ խղճի կորստյան և մարդկային դեմքը կորցրած շահիճների, որոնք ծարավի են միայն արյունոտ տեսարանների: Պատմության հարաբերական պոռնի լայն էքսպոզիցիայում յուսավորվում են ընտանիքը աշխարհին կապող հասարակական հարաբերությունները: Միջավայրի և ժամանակային հարաբերությունների բարեխիղճ ու համամասն բնութագրումը նշանակալի են մարդկանց անսովոր գործողությունների պատճառաբանման համար: Ընտանիքի գլխավորը՝ Հայկազուն հայրիկը, արդար քրտինքով ապահովում է իր աղքատ ընտանիքի օրվա հացը: «Հայկազուն Ակիյանը, ինչպես հայ լեռնաբնակների մեծ մասը, բազմաթիվ մասնագիտություններ էր բանեցնում: Նա գինեգործ էր, մեղրապահ, կոշկակար և տարվա եղանակների հետ փոխում էր արհեստը: Բարձրահասակ էր ու յայնպիսի կունք, ձախը կոշտ էր, եղանակից ճաքճաք դեմքը նման էր անձրևի տակ հողմահարված ծառի կեղևին»²⁰:

Հայկազունը հինավուրց և ատեղծագործ եռանդով օժտված հայ ժողովրդի ներկայացուցիչն է: Նա հպարտ է այն լեռների պես, ուր ինքը ապրում է: Միևնույն և ազատությունը և թույլ չի տա, որ իրեն ոս իր ընտանիքը անարգեն: Տպավորիչ են նրա հարաբերությունները հոգևոր դասի ներկայացուցիչ հետ: Եթե կեղծ բարեպաշտության մասին ոչինչ ասված չլինեի, ապա միայն այդ հարաբերություններն արտացոլող դրվագն իսկ բավական կլինեի հայտ բերելու կյանքում ու յրաքան միջակ երկերում հաճախ հանդիպող «Զավակս», «Այո, տեր հայր» խոսքերի անբնական պաթետիկան: Վեպներկան քահանայի խոսքն այստեղ ծաղրական, կոպիտ, առօրեական է, որ ցույց է տալիս հոգևոր անձի և ռամիկ մարդու բուն կենցաղային ընդդիմությունը:

Աստվածավախ և փոքր-ինչ սնահավատ Հայկազունի կյանքում խոր արմատներ ունեն ավանդույթային պատմություններն ու արարողությունները. նրա հոգում միշտ արթուն է պատասխանատվության զգացումը բնության ուժերի հանդեպ (երեխայի ծննդի, հեծյալների, ուռենիների տունկի մասին պատմող հատվածները):

Բայց ահա, ի բնե չոկ տքնաջան արարումի կոշված մարդը ընտանիքը պաշտպանելու համար պետք է մաքառի իր խաղաղ աշխատանքը խափանած թուրքերի դեմ: Հավատալով Աստծո արդարությանը, նա մոլոր չի մնում ու չի զանգատվում բախտից և մահվան շեմին էլ գոռոժում է գիտակցորեն: Անգոր մարդկանց անձնատապանությունը հեղինակը խորն ու հստակ է հիմնավորել: Այս քայլը նա չի գնահատում որպես տրամադրության թելադրանք կամ ինքնահաճ համառություն, այլ որպես ներքին անհրաժեշտություն և անընկճելի բնավորության արտահայտություն:

Ինքնասպանության մոտիվը սուպավորվում է դրականորեն, երբ կապվում է մարդկային ակտիվության և համոզմունքի հետ: Ընտանիքի անդամները հավատում են քրիստոնեական աստծուն և աստվածային արդարությանը: Նրանք երազում են և հույս տածում, սպասում իրականության հարաբերությունների փոփոխվելուն: Բայց սպանված ցեղակիցների ճակատագիրը չէր կարող չհարելու այդ սպասումի երկրային հիմքերը: «Դա նաև

²⁰ A. Wegner, Am Kreuzweg der Welten, Berlin, 1982, S. 190.

մե՛ր ճակատագիրն է լինելու», — ասում է Ադամի մայրը²¹։ Եվ կերպարների զարգացման հետ շեղումում է նրանց աճող վճռականությունը՝ համբերատար հուսալուց անցնելու ինքնուրույն, թեկուզ և հուսահատ քայլի։

Ադամի մայրը՝ Եղիսաբեթը, առաքինի, քնքուշ ու կամային հայ կին է։ Նա երազում է, որ Ադամը մի օր եկեղեցում Տիրոջ խոսքը պետք է ազդարարի²²։ Նրա հավատն առ Աստված և խաղաղատանքը Ադամի նկատմամբ այնքան մեծ են, որ երկրային սարսափները նրան չեն վրդովում։ Վեզները մեծագույն վարպետությամբ է պատկերում իդա, մատնանշելով լեզուի հոգեկոթ հաղթանակ քայլող մռայլ ու ինքնամոխի մորը, որ կռահելով կատարվելիքը, մի պահ մատնում է իր ներքին պայթյունը՝ փոքրիկ Ադամի հետ կառճ մի երկխոսությամբ, ասելով, որ նա շուտով պետք է Տիրոջ խոսքը ազդարարի երկնքում։ Միայն այս պերպ, երազանքի անմնացորդ կատարումի հավատով է նա հաշտվում ողորմ մահվան մտքին։

Թագուհին՝ Եղիսաբեթի տասնվեցամյա քույրը, որ փախստականների խմբի հետ Զեյթուն դալով քրոջ ընտանիքին էր միացել, անշուշտ, խռովել ափսոսանքով է բաժանվում կյանքից։ Նա, իհարկե, գեղեցիկ, հպարտ ու բարի լինելուց զատ ունեւոր և երջանիկ հարսնության երազ։ Եթե նմոնելուց առաջ Եղիսաբեթի աչքերը փայլում էին զվարթ մի վստահությամբ, և նա իր մանկանը հեմամահու իդրախտի խոստում է տալիս, ապա Թագուհին վերջին պահին Ադամին մեռնելու հորդորելիս անգամ նրան միայն այդ կերպ թուրքերից «փրկելը» նկատի ունեւոր։ Սակայն սա ամենևին չի նսեմացնում ու չի կարող քողարկել նրա աղքական հոգու՝ առեղծվածները։ Վեզները դա պատկերում է հանճարեղ վրձնահարվածով, ցույց տալով աղքատ համաքի անակնկալ ու անջնջելի դրոշմը Ադամի հոգում։ «Աղքատ ցավից թրջված աչքերը՝ մեծ ու գեղեցիկ, նրան հրեշտակի աչքեր թվացին»²³։

Պատումի «ամենաուրվագծային» կերպար Դանիելի՝ Ադամի ավագ եղբոր շուրթերին հեղինակը լատեր չի գրել։ Թագ լիվում է, որ տշինչ էլ չի «մոռացել» ասել։ Դանիելը ընտանիքի ո՛չ ավագն է, ո՛չ էլ կրտսերը, և այդ հանգամանքը գեղարվեստական ճշգրտությամբ ընդգծվում է նաև վերջին տեսարանում։ Որոշակի տղայական հարսնությունն այնուհանդերձ գերիշխող չէ, և նա հոր պես միայնակ չի նետվում ժառուց։ Անձնասպանության անխուսափելիության գիտակցությամբ հանդերձ, նա ո՛չ մոր մեռնելն է ուզում, ո՛չ էլ կարող է նրանից քալլ իսկ բաժանվել, ո՛չ կարող է կրտսեր եղբորը մահվան հորդորել, ո՛չ էլ որևէ կերպ մխիթարել, և նա լալիս է միայն մյուսների ու ոչ իր համար։

Կյանքը գերագույնս կարևորելու և կյանքի ու մահվան սահմանագծի ահավորությունն ընդգծելու հոմանիստական մղումը Վեզների հորդում «են պատումի կենտրոնական կերպար դարձնելու փոքրիկ Ադամին»։

Ընթերցողը գլխավոր հերոսին ծանոթանում է հենց պատմության սկզբում, ուր նկարագրվում է նրա ծնունդը. «...Երեխան համառորեն չէր ծնվում, և ծնո տատմբը ըստ ժողովրդական սովորության ընկույզների շաղ տվեց հղի կնոջ ազդրերի միջև՝ դրանց հետ խաղալու հրապուրելով դեռ չծնված երեխային։ Երբ նա վերջապես աշխարհ եկավ, Եղիսաբեթը կորցրեց գիտակցությունը։ Տատմբը ճիպտաթ թափահարեց օդում, որպեսզի քշի շար ոգիներին, բայց Հայկազուն հաղթիկը, պարթևահասակ մի ալգեգործ, որ Վանկահոտով լի սենյակում շնչահեղձ էր լինում, շորերի մեջ փաթաթած նորածնին տարավ տան կտուրը, որպեսզի շար ոգիները, եթե զոհ պահանջեն, գոնե խնային մորը։ Խոլ ու տխուր քամի էր փչում Տավոտսի յեռնեքում դռնվող քաղաքի վրայով, և տատմբը աղոթք էր հղում երկունքի երեք օգնականներին։ Դրսից լսվում էր սպառնալի շաշտուն»²⁴։ Նման պատկեր-

21 Նույն տեղում, էջ 194։

22 Նույն տեղում, էջ 193։

23 Նույն տեղում, էջ 195։

24 Նույն տեղում, էջ 189։

նեկրով հեղինակը տեղեկում է տխուր ժամանակների տրամագրություն: Մյուս կողմից՝ անուղղակի խորհրդանշանակություն կա նորածնին բաց երկրների տակ պահելու մեջ: Ասել է թե՛ մարդը ծնվում է առանց շղթայի, աղատության սեղը բնության պահանջն է, ե ոչ ոք իրավունք չունի դրա դեմ բռնանալու:

Պատմվածքում մանկան երևակայությունը շոյող հեքիաթային տարրերը հրաշալիորեն միահյուսվում են զանազան ավանդապատում դրվագների (օրինակ՝ աշխարհի արարումի մասին պատմող հատվածը) և նույնիսկ պայծառակերպում իրական կյանքի մոռյ կետերը:

Աղամը անսովոր ճակատագրով երեխա է: Նրա «հարցական», լուրջ ու թախծոտ աչքերում տեղում ենք հայ գյուղի տրտմությունը. «Երբ գյուղը լուռ էր, խորհրդավոր անդորրը պարտություն էր տղային, և նա ոչինչ չէր լսում, բացի ներքևում գյուղի ճամփեքով անցնող հզնաժայռի ցածր ճռուցից: Նրանց ճաղաղուրդ, փայտաշեն, զույգ սկավառակի նման անիվները ողջ ծանրությամբ շփվում էին կաղնե ամուր սնդիկին, անիվները երդում էին, և նրանց թախծոտ երգը տղայի սիրտը լցնում էր տխրությամբ: Բարձունքում դրանք հանկարծ տագնապալից ճռնչում էին. թեև Աղամը խոսքեր չէր գտնում, սակայն այդ դանդաղ փմտատն ուզում էր պառել իր համար: «Տքնի՛ր, տքնի՛ր,— ձայն էր դալիս անիվներից,— աշխատանք, սեր, մահ. ի՛նչ գեղեցիկ ես դու, կյանք: Ախ, ինչո՞ւ ես իրավունք չունեմ երջանիկ լինելու: Վաթան, հայրենիք: Հավերժ տառապում և մեռնում ենք քեզ համար, սո՛ւրբ Հայաստան...»²⁵:

Աղամի աչքերի առաջ մեռնում է ողջ ընտանիքը: Երկինք ու երկիր իրար են խառնվում, և կյանքի տենչով բռնված մանուկը կառչում է գետինին և շի ուզում մեռնել, թեև չգիտե, թե ի՛նչ կարող է հուսալ այդ կյանքից: Աղամի մեջ ուժեղ է ապրելու կոնազդը, ողբ և նրան հեռու է պահում ծալրահեղ քայլից: Սակայն, կյանքն «ընտրած» տղայի հոգում մահվան վախն անշուշտ փոխվում է կյանքի, դաժան իրականության հանդեպ վախի: Պատմության փերջը մեռնում է բաց, որ գուցե և նշում է դրական հեռանկար:

Այսպիսով, Վեգները մարդու ազաասիրական նկրտումները, տվյալ դեպքում թուրքական բիրտ իրականության դեմ հայ մարդու լքնոստությունը, գերադասում է նրա դատային պատկանելությունից, սեռից, տարիքից: Նա համարում է, գիտե, որ այդ պայքարն ի վերջո փհաղթանակի, բայց անհրաժեշտ է, որ աշխարհը ևս դատի այդ մասին: Իրազեկ աշխարհը:

ОТРАЖЕНИЕ АРМЯНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИИ В ПРОЗАИЧЕСКИХ ПРОИЗВЕДЕНИЯХ АРМИНА ВЕГНЕРА

М. Р. САРКИСЯН

Резюме

Санитарный солдат немецкого военного представительства в Турции Армин Вегнер, будучи свидетелем геноцида армян, создал под непосредственным впечатлением от увиденного ряд произведений в прозе. (новеллы «Банкир», «Нападение на женскую баню», неоконченный роман «Депортация»).

По убеждению писателя, любовь способна не только пробуждать ответную любовь, но и преодолевать взаимную вражду народов.

Изучение его произведений показывает, что трагедию армян писатель воспринимает как общечеловеческую. Поэтическим восприятием действительности объясняется высокая художественность его произведений, что определяет его значение и место в ряду писателей, отобразивших геноцид.

²⁵ Նույն տեղում, էջ 191—192: